



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltin
✓ 2224

1999

43843-4.1.

3669

1335

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍԳ

ՄԵՐ ԱԶԳԻՆ

ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՅ



574.

ԶՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԵՏԵԸՆ

1868



28211-62p

1881

SEP 20 1881

LIBRARY OF THE UNIVERSITY OF CHICAGO



SEP 20 1881

LIBRARY OF THE UNIVERSITY OF CHICAGO

1881

2224-60

28 2228

ՔԱՆԻ ՄԸ ԽՕՍՔ

ՄԵՐ ԱԶԳԻՆ

ԱՐԴԻ ՎԻՃԱԿԻՆ ՎՐԱՅ

Մեր ազգին արդի վիճակին ինչ կը հարկաւորի բացարձակապէս:

— Արժուծիւն և դատարարակութիւն:

Տակաւին ուրիշ:

— Գայրատուններու բարեկարգութիւն:

Տակաւին վերջապէս:

— Աւանանց և դիտութեանց ծաւալում ամեն կարգ Հայ հասարակութեան մէջ:

Ատոնք երկքն ալ մի և նոյնը կը նշանակեն:

Մենք ևս ուրիշ կերպով չենք խմանար, արդոյ հայրենակից, և ճիշդ ասիկա է յօդուածոյս բովանդակութիւնը:



37

Եթէ մեր ազգին ներկայ վիճակը քննենք, և ազգային լրագրաց հետզհետէ հաղորդած լուրերուն համեմատ՝ մեր դատողութիւնը կազմել ենթադրենք, եթէ երևոյթներու մէջ իրողութիւն փնտռենք, և ազգային ներքին կենաց վարագոյրը վար առնելով՝ անոր ներսի կողմը թափանցենք, ուրիշ բան չդիտի տեսնենք հոն, եթէ ոչ թըշուառութիւն, աղքատութիւն, երկպառակութիւն, անմիաբանութիւն, և անտանելի անտարբերութիւն մը, ամեն տեղ և դրեթէ ամեն հայաբնակ երկիրներու մէջ, անանկ որ ճրջմարտապէս իւր ազգը սիրողի մը համար անկարելի է ան.

տարբեր հանդիսատես լինել և շարափլ :

Ազգային այս տխուր կացութեան սյուսաճառը ինչ բանի կրնանք սեփհականել : — Մի միայն ազիտութեան անշուշտ և որ դարերէ 'ի վեր գլեղ գերի ըրած՝ տարտամ թմբութեան մը մէջ կը պահէ . ազիտութեան , որով գիտութեան լոյսէն զրկուած՝ խաւարի մէջ կը դեղերինք , և մեր ողորմելի վիճակին էութիւնը շենք դղար :

Այս , ազիտութիւնն է պատճառ , որ մենք աղքատ , թըշուառ և տառապեալ ազգ մի ենք :

Տղիտութիւնն է պատճառ , որ սնտի փառասիրութեամբ ազգութեան անունով իրարու դէմ կը հակառակինք , և փոխանակ իրապէս ազգին օգուտը փնտռելու , մեր կիրքերը և մեր կամքը յառաջ մղելու կը նկրտինք :

Տղիտութիւնն է պատճառ , որ հասարակութիւնը ազգային սահմանադրութեան ճշմարիտ ոգին չըմբռնեց , և կարող չեղաւ տակաւին օրինաւոր կերպով 'ի գործ դնել զայն :

Տղիտութիւնն է պատճառ , որ Լուսաւորչական , Ասթորիկ և Բողոքական Հայոց մէկ մասին մէջ տակաւին հակառակութեան ոգի մը կը տիրէ , և փոխանակ իբրև Հայ , իբրև ազգակից իրարու՝ սիրոյ և եղբայրութեան ձեռք կարկտելու , և ազգային ընդհանուր յառաջադիմութեան 'ի միասին նըստատելու , իրարու դէմ կը մաքառին տակաւին կրօնական պատճառներով :

Տղիտութիւնն է պատճառ վերջապէս , որ ազգային ո՛ր և իյէ յառաջադիմութեան անտարբեր աչօք կը նայինք , և փոխանակ աջակից և քաջալեր լինելու , շատ անգամ իսկ արդելք կը լինինք :

Ազգային իրաց այս վիճակին մէջ ինչ կը հարկաւորի բարձրակապէս և ինչ պէտք է : — Աէտք է ինչ որ ազգային լրագիրները մինչև հիմա տանիքներու վրայ քարոզեցին , պէտք է ինչ որ իրապէս ազգին օգուտը խորհող հեռատես անձինք հրատարակեցին , այսինքն .

ԿՐԹՈՒԹԻՒՆ , ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ , ԴՊՐԱՏԱՆՑ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ ԵՒ ՈՒՍՄԱՆՑ ԾԱՒԱԼՈՒՄ ԲՈԼՈՐ ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԷՋ :

Մենք կատարելապէս համադուած ենք որ մեր ազգին թըշուառ կացութեանն մի միայն դարման դպրատուններու մէջ պիտի փնտռենք , որովհետեւ անոնցմէ կախեալ է ազգային յառաջադիմութիւնը և լուսաւորութիւնը :

Դպրատուններով մեր մտքերը պիտի մշակենք և մարդկութեան արժանաւորութիւնը պիտի զգանք :

Դպրատուններով մեր բարոյական և մտաւորական վիճակը պիտի բարելաւենք . դպրատուններով պիտի հարստանանք , դպրատուններով ազգասէր և բարեկիրթ քաղաքացի պիտի լինինք . դպրատուններով վերջապէս լուսաւորեալ և քաղաքակիրթ ազգ մը պիտի հանդիսանանք :

Կը խոստովանինք որ վերջին տարիներս մեր ազգայնոց մէջ ուսման սէր և դպրատուններու յառաջադիմութեան համար մեծ ջանք կը տեսնուի , և քիչ շատ մտքերու յեղափոխութիւն մի տեղի ունեցած է , և լուսաւորութեան շարժում մի կը նշմարուի :

Սակայն չչափազանցենք , այլ մտադիր բլանք որ այս շարժումը , այս մղումը դէպ 'ի լուսաւորութիւն , ընդհանուր չէ , կամ աւելի աղէկ ըսենք՝ մեր ազգայնոց փոքրիկ մասին մէջ միայն կը տեսնուի : Մեր միտքը քիչ մը ետքը պիտի պարզենք :

Մենք որ մեր ազգը ճշմարտապէս սիրելու փառասիրութիւնն ունինք , և փափաքեցանք այս մէկ քանի տողերը հասարակութեան ներկայացնել , պարտք կը համարինք մեզի ազգային արդի վիճակին յարաբերութեամբ պարզապէս և ազատաբար մեր գաղափարը յայտնել , ընթերցողաց թողլով իրենց բանադատութիւնը ընել :

Մենք երևակայութիւններու և սնտախ յոյսերու վրայ տառանիչ չենք ուզեր . մենք չենք տեսներ այն յառաջադիմու-

Թիւնը, զոր շատերը տեսնել կը կարծեն և քանի որ համոզուած ենք թէ մինչև ցարդ եղած յառաջադիմութեան տասնապատիկը կրնար լինել, եթէ մեր կողմանէ կամք և ջանք լինէր, հեռեաքար իրաւունք ունինք տրանջելու և ցաւելու այսչափ ժամանակի կորստեան համար:

Մեր դպրատուններուն թիւը ընդհանրապէս շատ նուազ է, բայց շատ նուազ, և անոնց շատերուն մէջ տակաւին մանկավարժութեան նախնի ծուռ գրութիւնը կը տիրէ: Մեր հասարակութիւնը ընդհանրապէս տղէտ է, կարգաւ չսիրէ լրագիր շկարդար, հեռեաքար մեր ազգային լրագրաց թիւը շատ քիչ է. և եղածներուն մէկ մասն ալ մի միայն ազգասիրական զոհողութեանց ենթակայ:

Երբայ լրագիրը 1864ին դադրեցաւ, Բաղճաճէպը Յունուար ամսէն ՚ի վեր գեռ նոր սկսաւ հրատարակուիլ: Այս երկուքը մասնաւոր կը յիշենք, որովհետև անոնք պարբերական թերթերուն ամենէն հիներէն են: Ասոնցմէ զատ կան նաև շատ ուրիշներ տակաւին, որոնք բոլորովին դադրեցան:

Աննայի Մխիթարեանց արժանապատիւ միաբանութիւնը 1864էն մինչև 1867 այսինքն շորս տարուան միջոցի մէջ մի միայն տասը տեսակ գիրք հրատարակած է՝ ազգայնոց կողմանէ քաջալերութիւն չդտնելով:

Արեմն եթէ դպրատուններու, լրագիրներու և գրագիրտա-կան հրատարակութեանց թիւը ազդի մը յառաջադիմութեան ջերմաչափն կը համարի, եթէ այսպէս կրնանք ըսել, հեռեաքար այս մասին մեր ազդին յարաբերութեամբ ընելիք դի-ապողութիւնները մեր ընթերցողաց կը թողունք երևակայել: Էիմա քննենք:

Ըսենք թէ մեր ազդին մէջ տեսնուած յառաջադիմութեան շարժումը ընդհանուր չէ: Արդարև այս շարժումը գլխաւորապէս Աստանդնուպօլսոյ և քանի մի ուրիշ գլխաւոր քաղաքներու ազգայնոց մէջ կը տեսնուի: Սակայն մի թէ Աստանդնուպօլսոյ և ուրիշ քանի մը քաղաքներու մէջ քանի

մը վարժարաններ ունենալով մեր ազգը յառաջագիւմ կամ լուսաւորեալ կրնայ համարուիլ: Ազգին ամենափոքրիկ մասը Հայերէն և քանի մը եւրոպական լեզու սորվելով՝ ազգին ընդհանրութեանը մեծ կարեւորութիւն կրնայ ունենալ: Բայց բուն իսկ Աստանդնուպօլսոյ վրայ խօսինք:

Բլլէ- րէ րէօ Տօնօ դաղղիարէն հանդիսին մէջ աղնուական հայազգի դրչի մը հրատարակած « Հայկական արքի ընկերութիւն » անուամբ յօդուածին համեմատ՝ կը տեսնենք որ Աստանդնուպօլսոյ մէջ 150000 Հայազգի կը գտնուին: Մի և նոյն ժամանակը՝ Արամեան օրացոյցին մէջ կը կարգանք որ Աստանդնուպօլսոյ մէջ մի միայն 5614 Հայ աշակերտք և աշակերտութիւք գտնուեն կը յաճախեն . . . : Եթէ Աստանդնուպօլսոյ մէջ իրօք 150000 Հայազգի կը գտնուին, թող մեր ընթերցողք քննեն և դատեն հիմա թէ այսչափ բնակչաց համար վերոյիշեալ աշակերտաց և աշակերտութեաց թիւը սրչափ նուազ է համեմատաբար . . . :

Բայց դարձեալ, միթէ մեր ազգը մի միայն Աստանդնուպօլսոյ և քանի մի քաղաքներու Հայերով կը բաղկանայ: Ա՛չ, ո՛չ, ո՛չ, մենք ուրիշ եղբայրներ, ուրիշ ազգակիցներ ալ ունինք, Փոքր-Ասիոյ ներսերը, Հայաստանի, և Եւրոպիոյ Տաճկաստանի մէջ բնակող Հայ հասարակութիւնը ըսել կ'ուզենք, որոնց բարոյական, մտաւորական և նիւթական վիճակը, կացութիւնը խիստ ողորմելի և զթութեան արժանի է:

Ահաասիկ մեր այս տողերը գրելուն բուն նպատակը . կ'ուզենք անոնց փաստաբանն լինել, կ'ուզենք անոնց վիճակը քննել տեղեկանալ և ազգին ուշագրութեանը ներկայացնել:

Բլլէ- րէ րէօ Տօնօ յիշեալ յօդուածին մէջ կը կարգանք նաև որ Օսմանեան կայսրութեան մէջ 3,400,000 Հայ ժողովուրդ կը գտնուի:

Երե + միլիոն շքս հարիւր հազար: Ա՛ր ե՛ն այս Հայերը, ո՛ր կը գտնուին, անոնց վրայ ի՞նչ դիտենք, ի՞նչ տեղեկութիւն ունինք, անոնք ի՞նչ վիճակի ի՞նչ կացութեան մէջ են:

Անոնց վիճակը ամեն ոք գիւրութեամբ կրնայ երևակայել և տղիտութեան խաւարի մէջ ընկղմեալ՝ զուրկ ան ամեն բարեմասնութիւններէ, զորս ուսմունքը և կրթութիւնը միայն կրնան շնորհել, զուրկ ազգային և ընկերական բարձր և վաստակաւ զգացումներէ՝ դարաւոր թմրութեան մը մէջ կը ննջեն, և կը խորդան, ինչպէս կըսէ Մատթէ մէջ ազգասէր զրիչ մը:

Բայց ընթերցողը աւելի կատարեալ գաղափար մը ունենալու համար, թող ընկերանայ մեզի հետ դէպ 'ի Ասիոյ ներսերը և հոն պիտի տեսնէ մեր ազգայնոց թշուառ և ողորմելի վիճակը:

Մենք քանի մը բարեկամներու ընկերութեամբ Չմիւռէն 8-10 ժամ հեռաւորութեամբ գիւղաքաղաքներու մէջ գտնուած մեր ազգակիցներուն վիճակը տեսանք, և դառնասէս ցաւեցանք, չըսենք յուսահատեցանք, խորհելով որ եթէ մեր Լուսաւորեալ Չմիւռէն քանի մը ժամ հեռի գտնուած հայերու վիճակը այսչափ թշուառ և ողորմելի է, հասցա Հայաստանի և Ասիոյ աւելի ներսերը բնակող մեր ազգակիցներուն վիճակը ինչ պէտք է որ ըլլայ . . . :

Այս մեր հարցման կը թողունք որ Մատթէ թղթակիցը պատասխանէ: Ահաւասիկ նոյնին նամակը, որուն վրայ մեր ընթերցողաց մասնաւոր ուշադրութիւնը կը հրաւիրենք:

« Ապրիլն 3 մարտ 1868

« . . . Խմբագիր :

« Քաջ գիտնալով որ հայրենեաց ճշգրիտ համբաւները հայրենասիրաց շարունակ ախորժելի են, ուստի ահաւասիկ ես ալ երկու տարուան մէջ հայրենեաց ծոցը դեզերելովս ձեր ճաշակին յարմար հարուստ համբաւներ ունիմ ձեզ համբաւ Հայաստանի Մամիկոնեանց աշխարհէն. համբաւ Աբեղեան և Գաբեղեան աշխարհէն. համբաւ բարձր և ստորին հայոց աշխարհներէն, վերջապէս այնչափ համբաւ՝ որ դուք ալ բռնէք բաւ:

« Այս կողմերը բաւական ատեն է որ կը շրջադայիմ, սա-
կայն առանց ցաւոց չ'եմ կրցած անցնիլ այն դիւցադնաճեմ
վայրերը, որոց վրայ գերեզմանական խորին լռութիւն տի-
րած է, և տեղացի բնակիչ ազգայինք տխուր և գերեզմա-
նական վիճակի ենթարկուած են նիւթապէս և բարոյապէս :
.....

« Գպրոցներ չունին, եկեղեցիներ և ոչ ամեն գեղ. Նա-
րեկ կարդացողը 0/0 1 մատով կը ցրցրենն. վիճակնին խեղճ
ճնշեալ. վերջապէս ողջ կենօք կամաւ մահուան ակնդէտ,
մեծաւ մասամբ հոգեւոր և կրօնական միսիթարութենէ ալ
զրկուած : Գերջանու շրջակայներն ալ բաւական ազգային
հատուածներ ունինք որոնց վիճակը վերիններէն ցաւալի :
Ալաշկերտ, Պայազիտ, Խնուս թշուառութեան և խեղճութեան
մասին առաջին երկուսին հետ մրցելով յազթանակը իրենք
կը տանին. Սղերդէն առնելով մինչև Աանայ սահմանին մօ-
տիկցած հատուած անկեալ ազգայինք զուրկ յուսմանէ,
զուրկ 'ի գիտութենէ, զուրկ մեծաւ մասամբ 'ի հոգեւոր
միսիթարութենէ, զուրկ և միանգամայն և որ մեծն է օրա-
կան պարէնէ . . . :

« Մամիկոնեան Տարոնոյ աշխարհին բնակիչ ազգայնոց
կեանքը դիտէք, ինչ դրեմ. այս աշխարհը կարծես անեղծ
դրօշմ ունի իր ճակտին վրայ, ամեն թշուառութեանց մայր
ըսուելու համար և ոչ պակաս բան մը չունի : Քաղաքին
և դաշտին մէջի ազգայնոց կեանքը տխուր է, ուսումնա-
կան և բարոյական կենաց սնունդը կամաւ բոլորովին մէկդի
գրուած, նիւթական ապրուստ՝ ան ալ 0/0 3 ըստ արժանւոյն
հայթայթողներ դժուար կ'դտնուին. որչափ անդամ աչօքս հան-
դիպեցայ և տեսայ Հայ հասակաւոր օրիորդներ՝ որ մերկան-
դամ առ ամօթոյ չկարենալով դուրս ելլալ, իրենց գետնա-
փոր տանց թոնիրներուն մէջ կ'պահւերտին, այս աշխարհին
մէջ ազգային ցաւալի խեղճութիւններ շատ ունինք, որոց
ամենը մի առ մի չեմ կամիր դրել . . . :

« Ս. Կարապետի վանուց վանական խորհուրդը ընտրուած
և Գեր, Խորմեանի հետ առ այժմ համամտաբար գործելու

յոյսեր կը տեսնուին . ՅՅին երկրաշարժէն փլած վանուց
 դպրոցը դեռ կառուցուած չէ , միայն վրան փայտէ (էօրթմէ)
 մը շինուած և մէջը քանի մը դասատուներ կը դասնուին առ
 ժամս : Արեղեան և Պարեղեան վարի և վերի Բասենի ազգայ-
 նոց վիճակները բաւական անգործ կը դասնուին , բայց բնակիչ
 ազգայինք դեռ Նոյեան դարուն մէջ կապրին , դպրոց՝ ուս-
 մունք և այլն ամենեին չկայ : Օրերս Բասենի առաջնորդին
 փոխուիլ և նորէն հաստատուիլ կը լսենք . փոխել և անգ-
 րէն կարգելը ազգային Աւարչութեան բարձր անօրէնութեան
 յանձնուած է . բայց այսչափ միայն հաստատուիտենք որ յիշ-
 եալ եկեղեցականը ցարդ իր ձեռնհաս վիճակին մէջ բնաւ ազ-
 գային դաստիարակութեան հոգը մտքէն անդամ անցուցած չէ ,
 իր վիճակին մէջ տեղ մը դպրոց մը չկայ , մանաւանդ սրբոյն
 Մաղիսարոսի վանքին պէս հռչակաւոր վանքի մը մէջ ցարդ
 ինչո՞ւ ունենալու չէր աղւոր ժառանգաւորաց դպրոց մը որ
 իր ամեն յարմարութեամբը առատութեամբը և հարստութեամ-
 բը մեծ ապէս այս նպատակին կը ծառայէ , թէպէտ և սոյն կրօ-
 նական ուրիշ ազգային իրաւանց պաշտպանութիւնները վիճա-
 կայնոց բերնէն ՚ի բազում դէպս լսած եմ դժութեամբ ,
 բայց ըստ իս անիկայ այնչափ անձնուիրութիւն մը չէ սրչափ
 որ է ազգային մանկաւոյն դաստիարակութեան մասին եղած
 հոգը » :

Ար փութանք նաև օրինակել հաս Երուսաղեմայ Սիօն ամ-
 տազրոյն փետրուար ամսոյ մէջ հրատարակած փոքրիկ յօդուածը .

« Ար լիկիոյ վիճակէն , այսինքն Ձէյթուն , Մարաշ , Ան-
 թափ և այլ քաղաքներէն ն . դիւղերէն 160էն աւելի բարե-
 պաշտ ուխտաւորք յաջողութեամբ սուրբ ամիսս հասան , և
 տակաւին շատերն ալ գալու են : Այս ջերմեանդ ուխտաւոր-
 ները իրենց հետ քանի մի նամակներ բերած են » , և , կ'ըսէ
 և կը յաւելու .

« Այս լուրերը խիստ ուրախական են և նամակներու մէջ
 հրատարակութեան արժանի տեղեկութիւններ շատ կային .


ամսաթիւերիս տալազրու թիւնը արդէն լրացած լինելով կը
 թողումք ուրիշ ժամանակի : Միայն այսչափը կ'ըսեմք , որ
 բոլոր նամակները միաբարբառ **ՌԻՍՈՒՄՆ** կ'աղաղակեն : Ա-
 թոռոյս կարողութիւնը այնչափ կը ներէ , որ միայն դասա-
 կան գրքեր կ'ուղարկէ , ինչպէս առաջ ալ դրկած է : Բայց
 երանի թէ Ազգային կեդրոնական Աւարչութիւնը եւս գոնէ
 մի քանի հաս ընտիր դաստիարակներ դրկէր : Արդարեւ շատ
 ցաւալի է և Ազգային զգացմանց դէմ , եթէ դաստիարակու-
 թեան կողմէն անխնամ մնայ այն ժողովուրդը , որ թէպէտ
 ինքն անձեռնհաս է , բայց իւր կարօտութիւնը զգալով կը
 գոչէ այսօր . « Ո՛վ Աւրթուս , հէզ հայրենիք , քո թշուա-
 ութեանդ մի միայն դարման ուսումն է . ուսմամբ միայն կրնաս
 ստանալ քո յառաջադիմութիւնդ և ուսմամբ միայն կրնաս
 պահպանել քո առաջին գոյութիւնդ » :

Հարկ չենք համարիր հոս ուրիշ այսօրինակ տխուր նկա-
 րագիրներ մէջ բերել . ընթերցողը դիակ արդէն որ մեր ազ-
 գային լրագիրները նոյնը շարունակ մեզի կը հաղորդեն :

Արդ մեր խեղճ ազգայինք իրենց տխուր և ողորմելի վիճակէն
 ճակէն յուսահատեալ՝ ձեռքերնին դէպ 'ի մեզ երկնցում
 պաղատելի աչօք օգնութիւն կը կանչեն . . . և միաբարբառ
ՌԻՍՈՒՄՆ կ'աղաղակեն :

Ո՛հ , կրնանք արդեօք անոնց տխուր և դառն վիճակին
 վրայ կարեկից աչօք շնայիլ , կրնանք արդեօք անոնց պաղա-
 տանաց ձայնին անտարբեր մնալ . բայց ո՛վ պիտի պատասխանէ
 անոնց ձայնին . . . : — Աչ ես , ոչ դուն և ոչ ան . հասկա
 ամենքս ալ , բոլոր աղղը , ազգին բովանդակութիւնը . . . :

Մենք կը փափաքինք որ ազգային ընդհանուր Աւարչութեան
 հզօր պաշտպանութիւնը մինչև անոնց մահաւանդ անոնց վրայ
 տարածի : Մենք կը փափաքինք որ մեր այս խեղճ ազգայնոց
 մէջ կարելի եղածին չափ ուսումն և կրթութիւն ծաւալի , որ-
 պէս զի անոնք մտքի մշակութեամբ սթափին և զղան իրենց
 տխուր վիճակը և վայելեն ան ամեն առանձնաշնորհութիւն



ներք, զորս ուսումն և կրթութիւնն միայն կը շնորհեն. որպէս զի անոնք նաև ուսմամբ և կրթութեամբ օր քան զօր իրենց մտաւորական և նիւթական վիճակը բարելաւեն, և Հայ ընտանիքին ընտիր անդամներ կազմեն:

Ազգային Սահմանադրութիւնը ոչ ոք համար հաստատեցինք արդեօք, միթէ միայն Աստանդնուպօլսոյ և քանի մը քաղաքներու Հայոց համար, որոնք մեր ազգին ամենափոքրիկ մասը կը ներկայացընեն. չէ՞ որ նաև մեր բոլոր դաւաճաբնակ ազգայնոց համար: Սակայն անոնք Սահմանադրութեան սգին և սկզբունքը ըմբռնելու համար բաւական իմացականութիւն, բաւական հմտութիւն և կրթութիւն ունին:

Արեւմտեան ազգային Վարչութեան անմիջական պարտքն է ամեն բանէ առաջ անոնց մէջ ուսման և կրթութեան սկզբնական տարեքը դոնէ ծաւալելու միջոցները գտնել, եթէ ոչ առանց ասոր շատ դժուար չըսենք անկարելի պիտի ըլլայ Սահմանադրական օրինաց տակ զանոնք ենթարկել:

Արախ ենք ըսելու որ շատ բացառութիւններ կան այս մասին:

Փոքր Աթիոյ և Եւրոպայի Տաճկաստանի շատ քաղաքներու Հայ ժողովրդեան նիւթական վիճակը բաւական դահացուցիչ է, և կարող են դպրատան մը տարեկան ծախքը հոգալ: Սակայն անտարակոյս մեր խօսքը այն քաղաքներուն և դիւղաքաղաքներուն համար է, որոնց մէջ օրինակի համար 30-40 տուն աղքատ Հայ բնակիչք կը դա՛նուին, ինչպէս կրնանք սպասել որ անոնք դպրատուն մը ունենան, և վարժապետի մը տարեկան ծախքը հոգան, քանի որ անհնարին զրկողութեամբ իրենց օրական հացը հազիւ հազ կարող են հայթայթել: Արեւմտ ըստ որում իրենց վիճակը շնորհեր, միթէ ներելի է որ անոնց զաւակները առանց կրթութեան անբանի պէս մեծնան, միթէ ներելի է որ բոլորովին զրկուին մտքի մշակութենէ, միթէ անկարելի է անոնց մէջ գոնէ կարգալ գրելու չափ ուսումն տարածել, մէկ խօսքով միթէ ուրիշ միջոց մը չկրնար ըլլալ:

Մեր այս դժբաղդ ազգայնոց բարոյական և մտաւորական վիճակը բարւոքելու համար, որոնք ուրիշ յանցանք չունին, եթէ ոչ մի միայն որ Ասիոյ ներսերը ծնած են, և Աստանդնուպօլիս ծնելու բաղդը ունեցած չեն . . . :

Գիտաւորութիւն չունինք ամենեին կրօնական խնդիրներու միջամտիս լինելու, սակայն 'ի նպատակ մեր յետադայ ընելիք առաջարկութեան կը պարտաւորինք հոս քանի մը խօսք նաև մեր եկեղեցականներուն վրայ խօսիլ:

Մտադրութեան արժանի կէտ մը, որ անտարակոյս շատերուն ուշադրութիւնը գրաւած է, այն է որ որչափ մեր ազգին մէջ լուսաւորութեան շարժում մը կը նշմարուի, այնչափ նաև մեր եկեղեցականաց դէմ ընդհանրապէս դանդաւան և տրտունջն ըստ այնմ կ'աւելնայ:

Մեր ըսածին վկայ են ազգային լրագիրները, որոնց էջերը քանի մը տարիէ 'ի վեր եկեղեցականներու դէմ տրտունջներով և դանդաւաներով լեցուն են. ամեն կողմէ դժգոհութիւն կը յայտնուի անոնց յարաբերութեամբ, մինչև անդամ շնդկաստանէն, (տե՛ս Արշալոյս Արարատեան լրագրոյն 817 թիւը): Աը դանդաւանք որ անոնք ընդհանրապէս տղէտ են, իրենց պաշտօնին անբաւական, և կը պահանջենք բարեկիրթ և աղէկ դաստիարակուած եկեղեցականներ ունենալ:

Սակայն արդար և իրաւացի ըլլանք, և անաչառութեամբ դատենք: Ինչո՞ւ համար և ինչ իրաւամբ կրնանք սպասել որ մեր եկեղեցականները ուսումնաղէտ և աղէկ դաստիարակուած ըլլան, միթէ անոնց աղէկ դաստիարակուելու միջոց մը տուած է ազգը: Մեր խօսքը դ լիւսաւորապէս մեր քահանաներուն վրայ ուղղելով՝ տեսնենք թէ անոնց վիճակը նախանձելի վիճակ մ'է արդեօք, անոնք որ իրենց սրբազան պաշտաման նկատմամբ պատկառելի և անկախ վիճակ մը ունենալ պէտք էին, աւանդ, անոնց վիճակը տեսակ մը մուրացկանութիւն եղած է այսօր, և հետեւաբար՝ բացառութիւնները մէկդի ընելով՝ ո՞վ են և ինչ կրթութեան և դաստիարակութեան տէր

անձինք են որ քահանայական պաշտօնը յանձն կ'առնուն այսօր

Այս խնդիրը այնչափ յուզեալ և շատերուն ուշադրութեան և խօսակցութեան նիւթ եղած է՝ որ կը հարկաւորէր մասնաւոր յօդուած մը գրել անոր վրայ. մենք սակայն այսչափ միայն կ'ըսենք թէ մինչև որ ազգը յանձն չառնու իւր կողմանէ հողալ և սպահովցընել քահանայից նիւթական վիճակը անոնց պաշտօնին արժանաւորութեան համեմատ, սէտք չէ ամենեին ըստ պատել կրթեալ և բանիբուն քահանաներ ունենալ մեր եկեղեցեաց մէջ:

Իսկ բարձր եկեղեցականներու, այսինքն ամեն աստիճանի վարդապետներու դալով, մեզ արուած տեղեկութեանց համեմատ՝ կ'իմանանք որ արդի ժամանակիս մէջ կրթեալ և բանադէտ վարդապետներու թիւը շատ քիչ է: Եթէ մեր Չմիւռնիոյ վրայ դատելու ըլլանք, Կ. Պօլսոյ Ս. Պատրիարք Հօր Չմիւռէն մեկնելէն՝ ի վեր հմուտ և կենցաղագէտ վարդապետ մը չունեցանք, հետեւաբար Չմիւռնիոյ ժողովուրդը շատ ժամանակէ՝ ի վեր զրկուած է օգտաւէտ քարոզիչէ: Եթէ Չմիւռնիոյ համար այսպիսի վարդապետ մը հաղիւ կը գտնուի, բացառութիւնները մէկդի ընելով, արդեօք Տաճկաստանի ուրիշ հայաբնակ քաղաքներուն մէջ դանուածները ինչ հմտութեան տէր են:

Մեզ պիտի առարկեն հաւանականաբար որ եթէ ճեմարաններ և բարձր դպրոցներ չունինք, ունինք սակայն զանազան ազգային վանքեր, ուր վարդապետք կը կրթուին և կը պարաստուին:

Ճիշդ այդ վանքերու վրայ կը վախաքինք քանի մը խօսք խօսիլ:

Գիտենք որ Երուսաղէմի վանքէն զատ՝ տակաւին ուրիշ վանքեր ունինք Հայաստանի մէջ:

Վանայ գաւառին չորս ղլխաւոր վանուց միաբանութեանց առ ազգային Վարչութիւն մատուցած խնդրադրոյն մէջ հետեւեալ վանքերու անուանները կը կարդանք:

«Առաջին, Վասպուրական գաւառին մէջ գտնուած ամբողջ

մասնաւոր վանօրայք՝ որք առ հասարակ դրն թէ ինքնապաշտօն
 վիճակի մէջ են, զանոնք չորս գլխաւոր վանօրէից հսկողու-
 թեան և կառավարութեան տակ գնել. այսինքն Աղթամարայ
 մէջ եղածներն նոյն աթոռին վերածել, որք են՝ Նարեկայ,
 Կապուտիողայ, Գոմոյ Ս. Սահակայ և Ս. Կարապետու վան-
 քեր: Նմանապէս Վարադայ վանուց կառավարութեան ներքե
 գնել հեռուեալները. Հողեաց վանք, Ս. Բարթուղիմէոսի
 վանք Աղբակու, Ս. Գրիգորի վանք Սալնապատու, Ս. Խաչի
 վանք: Այս կարգին մէջն է Կարմրաւոր վանք. բայց զայն
 թող տալու է Վանայ Առաջնորդին, որպէս զի առաջնորդա-
 րանին նիւթական պէտքերը հողացուին: Լիմ անապատին վե-
 րաբերելիներն են՝ Տէր Յուսկանորդւոյ վանք, Ականից Ս.
 Գէորգ, Արծուաբեր Ս. Աստուածածին, Մեծոփայ վանք և
 Կենսաբեր: Եւ Կաուց անապատին վերաբերելիներն են ըս-
 քանչեւ լողործ Մատնայ վանք և Արջոնից վանք: (Մասնա-
 լրագիր, թիւ 813):

Ար խոստովանինք մեր տղիտութիւնը, կարելի է մեր ըն-
 թերցողներէն շատերն ալ մեզի հետ ըսեն, որ այս վանքեր-
 րուն անունները ոչ միայն մեզ անծանօթ էին, հասրա նաև
 առաջին անգամն է որ զանոնք կը կարդանք. և անտարակոյս
 շատ ուրիշներ ալ կան տակաւին, որոնք մեզ բոլորովին ան-
 յայտ են:

Հիմա ներուի մեզ հարցընել թէ այս վանքերուն կրօնա-
 ւորները ինչ կ'ընեն, ինչ բանի կը ծառայեն, եթէ ուսմանց
 և գրական աշխատութեանց չեն պարապիր, ըստ որում անոնց
 գրականական դործերը և հեղինակութիւնները տեսած չենք,
 չենք կրնար երևակայել թէ անոնք ինչ մասնաւոր զբաղմունք
 կրնան ունենալ, բայց չենք կրնար միանգամայն իբրև ազգային
 անհատ մեր դժգոհութիւնը և զարմանքը չյայտնել տեսնելով
 որ անոնք ազգային գրականութեան մասին բոլորովին ան-
 հոգ են և ծոյլ:

Ո՛րչափ արդար և իրաւացի է դովութեամբ յիշատակել

Հոս Աենետիկի և Աեննայի Մխիթարեան արժանապատիւ
Միաբանութիւնները: Մեր խօսքը կրօնական խնդիրներէ
դուրս՝ մի միայն հայկական գրականութեան վրայ ըլլալով,
կ'ըսենք թէ ամեն Հայ առանց բացառութեան անոնց շնորհա-
կալու է, որովհետեւ մեծաւ մասամբ անոնց կը պարտաւորինք
հայկական գրականութեան վերածաղկումն և յառաջադիմու-
թիւնը:

Գիտենք աղէկ որ Աենետիկի և Աեննայի Մխիթարեան Մի-
աբանութիւնները Եւրոպայի լուսաւորեալ քաղաքներու մէջ
գտնուելով՝ ամեն դիւրութիւն ունին եւրոպական ուսմանց և
դիտութեանց օգուտները քաղելու, քանի որ վերոյիշեալ
վանքերուն կացութիւնը բոլորովին տարբեր է՝ Եւրոպայի
լուսաւորութեան կենդրոնէն հեռու գտնուելով: Սակայն և
այնպէս մենք նոյն վանքերէն արհեստներու և դիտութիւննե-
րու վրայ հրատարակութիւններ չենք սպասեր, բայց կար-
ծեմք իրաւամբ կրնանք պահանջել որ դոնէ հայկական գր-
ականութեամբ պարապին, և դայն ծաղկեցընելու հող տանին,
մանաւանդ որ Հայաստանի կենդրոնը կը գտնուին, որուն լեռ-
ները, դաշտերը, բլուրները, դետերը, ժայռերը հայկա-
կան լեզուն կը խօսին . . . :

Ցաւակցութեամբ կը յիշատակենք հոս նաև Արմաշու վանքը,
որ ասկէ քանի մը տարի առաջ տարան մի ունեցաւ, և ՅԱՅՍ
անունով ամսատետր մը հրատարակեց, և մեզի իրօք յոյս կու
տար ապառնիին մէջ՝ ի նպաստ ազգային գրականութեան ըն-
տիր հրատարակութիւններ ՚ի լոյս ընծայելու: Գծբաղդաբար
ազգայնոց յոյսը ՚ի դերև ելաւ, նոյն հանդէսը դադրեցաւ,
և նոյն տարանէն ուրիշ արդիւնք մը երևան չելաւ:

Ասոր հակառակ ուրախութեամբ կը փութանք յիշատակել
Երուսաղէմայ վանքը, որ քանի մը տարիէ ՚ի վեր շարժիլ
սկսաւ: Մեր եկեղեցականները զգացին վերջապէս որ մի մի-
այն աղօթելու, ուտելու, քնանալու համար նոյն վանքը չեն
գտնուիր: Հոն ունինք այսօր վարժարան մի, որուն մէջ 30

չափ աշակերտք կը կրթուին: Այս թիւը շատ նուազ է անշուշտ, բայց անցեալը յիշելով այսքանին ալ դո՛՛հ ենք հիմակուհիմա, թէպէտև կրնայինք իրաւամբ սպասել Երթուողիմայ վանքին պէս հինօրեայ և երևելի հաստատութենէ շատ աւելի ընդարձակ վարժարան մի: Ունինք հոն նաև տպարան մի, որ ապառնին համար գրականութեան ընտիր հրատարակութիւններ կը խոստանայ: Սէ՛ծ ամսագիրը արդէն այս տպարանին արդիւնքն է, անոր մէջ ընտիր և ազգասիրական ոգւով գրուած յօդուածներ պակաս չեն, որոնք, տարակոյս շուենինք, մեր սիրելի ազգայնոց վրայ մեծ տպաւորութիւն կ'ընեն:

Այս վանքերէ զատ ունինք նաև Ս. Էջմիածնայ վանքը:


Մեր ազգայինք աղէկ կը յիշեն որ շատ տարիներ առաջ երբ Մատթէոս Աոստանդնուպօլսոյ նախկին պատրիարքը՝ Ս. Էջմիածնայ Աթոռին Աթոռիկոս անուանեցաւ, ամեն Հայ ուրախութեամբ ողջունեց անոր ընտրութիւնը, ազգային լրագիրները գովութեամբ յիշատակեցին անոր անունը և Հայաստանի համար երջանիկ և պայծառ օրեր աւետեցին, սպասելով անշուշտ որ վեհափառ Աթոռիկոսը իւր ազգասիրութեամբն ու խոհական կենցաղագիտութեամբը ազգային բարոյական և մտաւորական յառաջադիմութեան հզօր առաջնորդ մը պիտի լինէր:

Ս. Աթոռիկոսը ~~առօր~~ ~~փառօր~~ Էջմիածին դնաց, բայց... անկէ ետև տխուր լուծիւն մի պատեց...: Լրագիրները հազիւ հազ իւր անունը կը յիշատակէին, ազգասէրներու տածած յոյսը 'ի դերև ելաւ, վեհափառ Աթոռիկոսը չարտասխանեց ազգին իւր վրայ ունեցած ակնկալութեան և վըստահութեան:

Հիմայ ամեն Հայու ակնարկը արդի Գէորդ վեհափառ Աթոռիկոսին վրայ դարձուած է, որուն համար ազգային լրագիրք իբրև ազգասէր, կենցաղագէտ և ժիր հովիւ կը հրատարակեն:

Մեծ ուրախութեամբ կարդացինք արդարև ազգային լրագրաց մէջ թէ « Ա. Ե. Ս. Աթոռիկոսը Էջմիածին հասնելէ 'ի վեր, Ուսումնական Խորհուրդ հաստատեր է, որուն նպատակն է

1715 / 2821-62



Ս. Էջմիածնայ ուսումնարանին և բոլոր Առաքապետանի մէջ
դանուած ազգային դպրատանց բարեկարգութեան և յառա-
ջագիւմութեան հոգ տանիլ, և հարկաւոր եղած տեղուանքը
թէ տղոց և թէ աղջկանց համար վարժարաններ բանալ» .
և այլն : (Արշալոյս Արարապետան, թիւ 815) :

Այսպիսի ազգօգուտ ձեռնարկութիւն մի, ինչպէս նաև
Մասիսի հրատարակութեանց համեմատ՝ մեր Աւեսապետին դէպ
'ի Բէթրզպուրկ ըրած Ճամբորդութեան առ թիւ ամեն զինքը
դիմաւորող Հայկազն ժողովրդեան տուած յորդորները, ուս-
մունքը և դպրատունները առաջ տանելու համար զիրենք
քաջալերելը, ասոնք ամենքն ալ մէյ մէկ առհաւատչեայ են
թէ մեր վեհափառ հայրն ու Աստուծոյն արդի դարուն ողին
ըմբռնած է, և մեզի մեծ յոյսեր կու տայ ազգին օգտին
համար ընելիք ասպայայ բարիքներուն համար, ուստի պիտի
սպասենք, ակնդէտ և ակնկալու պիտի սպասենք . . . :

Հիմա որ համառօտ կերպով դադարաւ մը տուինք մեր
ընթերցողաց՝ Ասիոյ և Եւրոպիոյ Տաճկաստանի մէջ դանուած
մեր ազգակիցներուն դժբաղդ և ողորմելի վիճակին վրայ,
կամ աւելի աղէկ ըսենք, նոյնը կրկնեցինք կամ յիշեցինք
ինչ որ դիտէինք արդէն, ինչպէս նաև մեր եկեղեցականաց
անբաւականութիւնը, և մեր վանքերուն անդործունէութիւնը,
իրենց ներկայացուցինք, և որովհետև այս խնդիրները ազ-
գային կենսական խնդիրներ են և որոնց համար անտարբեր
չենք կրնար լինել, ուրեմն խորհինք հիմայ թէ արդեօք
չկան անանկ միջոցներ, որով կարենանք այս թշուառ կացու-
թեան դարման մը դտնել :

Ազգային Սահմանագրութեան առաջին գլխոյն Ե՛ Յօդ-
ուածին մէջ հետևեալը կը կարդանք :

« 33. Աւսումնական խորհուրդը 10 ուսումնական անդամ-
ներէ կը բաղկանայ »

« 34. Աւսումնական խորհրդին պաշտօնն է՝ ազգային դաս-
տիարակութեան ընդհանուր տեսչութիւնը : Իր պարտաւորու-
թիւնքն են՝ ազգային վարժարանաց բարեկարգութեանը հըս-
կելը, ազգային դաստիարակութեան ընդհանուր հիմնադիր մը
և դպրոցական կանոններ հաստատել, և անոնց համեմատ՝ ազ-

Գային վարժարանաց մէջ միօրինակ ընթացք մը որոշել թէ ուսման և թէ ուսուցման, սկզբնական դիտելեաց ուսումը ծաւալել, աղջկանց դաստիարակութեանը յատուկ կերպով հող տանիլ, սոյն նպատակով հաստատեալ ընկերութեանց խրախոյս տալ և ձեռնառու ըլլալ, ազգային դաստիարակաց կացութիւնը լայնընեւու և ապագան անդորրելու թնամ տանիլ. Ազգին մէջ բանիրուն դաստուաներ հասցընելու և դպրոցաց ընտիր դասադրքեր պատրաստելու փոյթ ունենալ» :

« 33. Աւսումնական խորհուրդը պէտք է իր կողմէն ամենայն ջանք 'ի գործ դնէ որ' թէ Պօլսի և թէ դաւառներու մէջ ամեն թաղ սկզբնական դաստիարակութեան դպրոցներ ունենան նոյնպէս Պօլսի և առաջնորդանիստ քաղաքները մէյ մէկ ազգային ուսումնարան ունենան դասական ուսմանց համար» և. և. :

Արեւմտ ըստ Յասմանագրութեան ազգային դաստիարակութեան ընդհանուր տեսչութիւնը տասը ուսումնական անձերէ կախեալ պիտի լինի : Անոնք վարժարանաց բարեկարգութեան վրայ պիտի հսկեն, դպրոցական կանոնադիր պիտի հաստատեն, աղջկանց դաստիարակութեան մասնաւոր հող պիտի տանին, ազգին մէջ բանիրուն դաստուաներ պիտի հասցընեն, և ամեն ջան 'ի գործ պիտի դնեն թէ Պօլսոյ և թէ դաւառներու մէջ սկզբնական դաստիարակութեան դպրոցներ հաստատել, և. :

Բայց սոյս ամենը Աւսումնական խորհուրդը ինչ միջոցով, ինչով պիտի ընէ, չիշատակուիր ամենևին, միայն թէ կըրսէ. « Աւսումնական խորհուրդը պէտք է հոգ տանէ և ամեն ջան 'ի գործ դնէ. ինչ կրնանք իմանալ « ամեն ջան 'ի գործ դնէ » ըսելով, ինչ ընէ, ինչպէս ընէ, ինչ միջոց բանեցնէ : « Բանիքան դաստիարակութեան հասցընէ » կըրսէ, ինչ միջոցով, միթէ ուսուցչական դպրատուն մը ունինք : , դպրոցներ և վարժարաններ հաստատել » , և. . միթէ ազգային ընդհանուր Վարչութիւնը մասնաւոր դումար մը Աւսումնական խորհրդին հրամանին պիտի դնէ այս ամեն կարգադրութեանց և պիտոյից համապատասխանելու համար :

Արեւմտ Աւսումնական խորհրդին պաշտօնը որչափ որ ծանր,

այնչափ ալ ազգին հողմանէ անոր մասնաւոր միջոց մը տրբուած չէ իւր նպատակին հասնելու :

Ազգային դաստիարակութեան վրայ հսկելը՝ ազգին ապանի երջանկութեան, բարօրութեան և յառաջագիւտութեան վերայ հսկել, ըսել է. հետեւաբար ասանկ կենսական և ամենակարեւոր խնդիր մը ազգին անմիջական ուշադրութեան և հսկողութեան առարկան պէտք է լինի :

Եւրոպայի մէջ, ինչպէս յայտնի է, հասարակաց կրթութեան ծախքը սէրութեան կողմանէ կը տրուի : Մեծ ուրախութեամբ կարգացինք վերջին օրերս թէ « Օսմանեան կառավարութիւնը՝ քրիստոնեայ և իսրայէլացի ժողովրդոց մէջ ուսմունք զարգացնելու մարդասիրական նպատակաւ, կը խորհի անոնց ազգային վարժարանաց տարեկան արժանաւոր եկամուտ մի կարգել առանց մեաս մի հասցունելու իւրաքանչիւր ազգայնութեան տյժմեան ազատութեանը՝ ի մասին դաստիարակութեան մանկանց » : (Արշալոյս արարաբեան, թիւ 827)

Եթէ այս խորհուրդը իրապէս ՚ի դործ դրուի, անիկա նոր ապացոյց մի պիտի ըլլայ Եւրոպիոյ առջև Օսմանեան կառավարութեան ազատամիտ սկզբանց և բարետէր դիտաւորութեանց, և իւր հպատակաց շնորհակալութեանն և երախտագիտութեանը նոր իրաւունքներ պիտի ստանայ :

Թողունք որ կայսերական կառավարութիւնը այս օգտաւէտ և միանգամայն ամենահարկաւոր խորհուրդը ՚ի դործ դնէ, գանք հիմա նորէն մեր խնդրոյն և ներկային վրայ խորհինք :

Գաղղիոյ հասարակաց կրթութեան համար որոշեալ գումարն է ներկայ տարւոյս համար Ֆրանք 21,930,821, գրեթէ 40,000,000 ժողովրդի համար :¹

¹ Յիշենք հոս մեր ընթերցողաց ուշադրութեանը համար որ Ամերիկացի Պոլսի Նիւ Եօքք Նահանգին մէջ հասարակաց կրթութեան ծախուց համար որոշեալ գումարն էր 1866 տարուան մէջ 6,982,935 Զօլար, կամ 33,000,000 Ֆրանք : Զաւելունք մի և նոյն ժամանակ որ Նիւ Եօքք Նահանգին բոլոր քաղաքացիութիւն է միայն 4,000,000 : Այս գումարը և Նիւ Եօքք Նահանգին բնակչաց թիւը, Գաղղիոյ ժողովրդեան թուոյն և անոր հասարակաց կրթութեան ծախուց համար որոշեալ գումարին հետ բաղդատելով՝ ընթերցողը կրնայ դատել և իմանալ թէ ինչու համար հռչակուած է միշտ Ամերիկացի Միացեալ Նահանգաց մէջ ուսուցիչ և կրթութիւնը վերջին ծայր հասած են :

Սահայն այս դումարը չհամապատասխանելով ժողովրդեան
կրթութեան ծախսոց և պիտոյիցը, վերջին ժամանակներս
կոմս տը Մատր յայտարարութիւն մի հրատարակեց, որով
կ'առաջարկէ ընկերութիւններ հաստատել և անոնց միջոցաւ
գարատուններուն վրայ հսկել, և հասարակութեան մէջ
ուսմունք և կրթութիւն ծաւալել:

(Liberté, 6 Յունուար 1868)

Ուրեմն քանի որ հասարակաց կրթութեան համար կայսեր-
ական Առաւելարութեան կողմանէ մեզի միլիոններ չտրուի,
դոնէ հիմակուհիմա, և քանի որ ազգային կենդրոնական
Վարչութիւնը իւր ձեռքը նիւթական միջոց չունի ազգային
ընդհանուր դաստիարակութեան ուղղակի օգնելու, հետեւա-
բար ուրիշ միջոց մի չենք տեսներ մեր նպատակին հասնելու,
եթէ ոչ՝

Առաջին. ինչպէս արդէն ազգային լրագիրները քանի քա-
նի անգամ առաջարկեցին, կայսերական Առաւելարութեան
տակ դանուող հայ հասարակութենէն մարդ զլուխ փոքրիկ
տուրք մը առնել, և ասկէ դոյացած դումարով ազգային ընդ-
հանուր դաստիարակութեան պէտքերը հոգալ:

Երկրորդ. եթէ այս տրոց խնդիրը անկարելի ըլլայ ի
գործ դնել, ազգային ընդհանուր Վարչութեան ձեռք, թէ-
պէտեւ ըստ մեր տեսութեան անիկա ամենէն օրինաւոր, ամե-
նէն բնական և ամենէն պարզ եղանակն է, այն ատեն կը
հարկադրինք տը Մատր կոմսին օրինակին հետեւիլ, և մեր
ազգայնոց առաջարկել:

1⁰ Ազգին իրապէս օգուտը փնտռող խոհեմ, քաղաքակիրթ և
իրենց նպատակին ս'ր և իցէ միջոցաւ հասնելու համար ուխ-
տեալ անձերէ բաղկացեալ ընկերութիւն մը հաստատել, ու
որուն ոչ միայն Առստանդնուպօլսէն հասլա ամեն հայաբնակ
քաղաքներէ անդամ առնուել, և որուն ոչ միայն Առստան-
դնուպօլսոյ Հայերը միայն հասլա Փոքր Ասիոյ և Եւրոպայի
Տաճկաստանի, Հայաստանի և Ռուսաստանի, Պարսկաստանի,

1 Բայց ոչ թէ նոյն դոյացած դումարով Առստանդնուպօլսոյ Փրկչի հի-
ւանդանոցին ծախքերը հոգալ. այս կէտը աղէկ մը պարզենք, ըստ որում
նոյն հիւանդանոցը Առստանդնուպօլսոյ Հայոց կը վերաբերի, և ոչ ընդհա-
նուր ազգին, հետեւաբար Առստանդնուպօլսոյ Հայք միայն անոր ծախքը հո-
գալու պարտաւոր են: Մենք նաև Չմիւսնացիքս հիւանդանոց մը ունինք,
բայց, անոր ծախքը երբէք ընդհանուր ազգէն պահանջած չունինք . . . :

Հնդկաստանի, Արևելեան կղզիներու և ուրիշ ամեն հայաբնակ քաղաքներու բոլոր Հայերը նպաստամատոյց ըլլան ո՛ր և իցէ կերպով:

2⁰ Ընկերութեան կենդրոնը ըլլայ Աստանդնուպօլիս, ուր կը գտնուի հայկական դիւանօր տարրը, կամ ուրիշ երեւելի հայաբնակ քաղաք մը:

3⁰ Ընկերութեան նպասակը ըլլայ մի միայն ազգային ընդհանուր դաստիարակութեան վրայ հզօր կերպով հսկել, դըրսատունները բարեկարգել, և հասարակութեան մէջ ընդհանրապէս ուսում և կրթութիւն ծաւալել:

4⁰ Աենդրունական Համալսարան մի հաստատել բարձր դիւանութեանց համար, և հոն պատրաստել վարդապետներ, քահանաներ, տնտեսագէտներ, և:

5⁰ Աւուստրալիան կամ մանկավարժութեան դպրատուն մի հաստատել, և գերմանական դրութեան համեմատ՝ ազգային վարժարանաց համար ընտիր դասատուներ, վարժապետներ պատրաստել:

6⁰ Ամեն հայաբնակ քաղաքներու հետ յարաբերութիւն հաստատել, և ուր որ տեղական ազգայնոց վիճակը շնորհիւ դպրատուն մը ունենալ և վարժապետի մը տարեկան վարձքը հողալ, անոնց ձեռնառու ըլլալ, դպրատուն կանդնել և վարժապետի տարեկան ծախքը վճարել:

7⁰ Հոն ո՛ւր տեղական ազգայինք կարող չեն դպրատան մը քուլք ծախքը հողալ, անոնց նմանապէս օգնել, և դպրատան վրայ հսկել:

8⁰ Ազգային ընդարձակ տպարան մի հաստատել, և հոն ստել ազգային դպրատանց համար պատկանեալ ամեն դիրքերը, նմանապէս ՚ի նպաստ հասարակաց ընթերցանութեան զանազան օգտակար դիրքեր հրատարակել և զանոնք աժան դնով ծախել և այս կերպով հասարակութիւնը ընթերցանութեան սովորել:

9⁰ Ազգին ուշիմ և տաղանդաւոր երիտասարդներէն Եւրոպա խրկել, զանազան դիւանութիւններ և արհեստներ սորվելու համար, և անոնց միջոցաւ նոյն դիւանութիւնները և արհեստները հետզհետէ ազգին մէջ տարածել:

Հնդկաստանի, Արևելեան կղզիներու և ուրիշ ամեն հայաբնակ քաղաքներու բոլոր Հայերը նպաստամատոյց ըլլան ո՛ր և իցէ կերպով:

2⁰ Ընկերութեան կենդրոնը ըլլայ Աստանդնուպօլիս, ուր կը գտնուի հայկական դիւանօր տարրը, կամ ուրիշ երեւելի հայաբնակ քաղաք մը:

3⁰ Ընկերութեան նպատակը ըլլայ մի միայն ազդային ընդհանուր դաստիարակութեան վրայ հղօր կերպով հսկել, դըստաւանները բարեկարգել, և հասարակութեան մէջ ընդհանրապէս ուսում և կրթութիւն ծաւալել:

4⁰ Աենդրոնական Համալսարան մի հաստատել բարձր դիւանութեանց համար, և հոն պատրաստել վարդապետներ, քահանաներ, անտեսագէտներ, և:

5⁰ Աւսուցչական կամ մանկավարժութեան դպրատուն մի հաստատել, և դերմանական դրութեան համեմատ՝ ազդային վարժարանաց համար ընտիր դասատուներ, վարժապետներ պատրաստել:

6⁰ Ամեն հայաբնակ քաղաքներու հետ յարաբերութիւն հաստատել, և ուր որ տեղական ազդայնոց վիճակը շնորհի դպրատուն մը ունենալ և վարժապետի մը տարեկան վարձքը հողալ, անոնց ձեռնառու ըլլալ, դպրատուն կանդնել և վարժապետի տարեկան ծախքը վճարել:

7⁰ Հոն ո՛ւր տեղական ազդայինք կարող չեն դպրատան մը քաջ ծախքը հողալ, անոնց նմանապէս օգնել, և դպրատան վրայ հսկել:

8⁰ Ազդային ընդարձակ տարածան մի հաստատել, և հոն տպել ազդային դպրատանց համար պատկանեալ ամեն դիրքերը, նմանապէս ՚ի նպատակ հասարակաց ընթերցանութեան զանազան օգտակար դիրքեր հրատարակել և զանոնք աժան դնով ծախել և այս կերպով հասարակութիւնը ընթերցանութեան սովորել:

9⁰ Ազդին ուշիմ և տաղանդաւոր երիտասարդներէն Եւրոպա խրկել, զանազան դիւանութիւններ և արհեստներ սորվելու համար, և անոնց միջոցաւ նոյն դիւանութիւնները և արհեստները հետզհետէ ազդին մէջ տարածել:

որ իւր ձեռնառութիւնն իրապէս իւր ազդակիցներուն օգտին
 համար պիտի գործածուի : Յիշեցինք ասկէ առաջ որ Օսման-
 եան կառավարութեան տակ գտնուող հայ ժողովրդեան թի-
 ւը գրեթէ 3,400,000 է : Ասոր վրայ եթէ աւելցընենք
 Առուսիոյ, Պարսկաստանի, Հնդկաստանի և Եւրոպիոյ զանա-
 զան երկիրներու մէջ բնակող Հայերը, ընդ ամենը պիտի
 հաշուենք 4,000,000 :

Արդ խորհինք հիմա, եթէ իրօք ամեն Հայ տարեկան փոք-
 րիկ դումար մը ազգային օգտին համար նուիրէ, ո՛հ ո՛րպի-
 սի յառաջագիմութիւն, և ո՛րպիսի ազդօգուտ ձեռնարկու-
 թիւններ ասկէ կրնան հետեիլ :

Բայց արդեօք ասիկա անկարելի բան մ'է : Ազգին օգնե-
 լով չէ՞ որ մեզի օգնած կըլլանք, Ազգ ըսելով, կ'իմանանք,
 ազգ մենք ենք, ամեն անհատ ազգ է, ազգին անդամ է,
 հետեւաբար ամենքս ալ կը պարտաւորինք ազգային շինութեան
 և յառաջագիմութեան նպաստել մեր վիճակին մեր կարողու-
 թեան մեր հարստութեան համեմատ : Սպասել և սրահանջել որ
 ազգին մէջ հարստութեան տէր անձինք միայն ընեն ինչ որ
 ամենքս ալ պարտաւոր ենք ընելու, ասիկա ծուռ տրամադրու-
 թիւն մի է : Հարկ է որ ամեն ազգային անհատ՝ առանց բայա-
 ոսութեան՝ նպաստամատոյց լինի, հարուստը իւր հարստութեան
 համեմատ, իսկ դուռն և ես նաև մեր կարողութեանը համեմատ :

Ո՛վ Հայեր, որո՛ւ պիտի սպասենք, որո՛ւ պիտի յուսանք .
 օտարէ օգնութիւն պէտք չէ որ սպասենք, մենք մեզի օգնել
 պէտք ենք, եթէ մենք մեզի չենք օգներ, հասլա մ'վ պիտի
 օգնէ մեզի, մեր ոյժը մեր մէջն է, մեր ոյժը մեր մէջը պիտի
 փնտռենք, ինչ որ առանձին չենք կրնար ընել, եթէ միա-
 նանք, եթէ միաբանինք, մեծամեծս կրնանք գործել,
 բաւական է որ կամք ունենանք . « Կամենալը կարենալ ըսել
 է », կ'ըսէ Գաղղիացին :

Քննենք մեր վիճակը : Ըստ որում մեր ազգութեան գըլ-
 խաւոր մասը Տաճկաստանի մէջ կը գտնուի, անոր վրայ
 խօսինք :

Աեհափառ Սուլթանի կառավարութիւնը մեզի գրեթէ ամեն
 արտօնութիւն շնորհած է, եկեղեցիներ շինել, դպրատուն-

ներ և հիւանդանոցներ հաստատել, ըրադ իրենք հրատարակել, ընկերութիւններ կազմել, արհեստներ առաջ տանել, վաճառականութեամբ զբաղիլ. և շինք կրնար ուրանալ, որ աս արտօնութիւնները ունինք քիչ կամ շատ աղատութիւնով: Ասկէ զատ ունինք ազգային Սահմանադրութեան դործադրութեան համար՝ Տէրութեան արտօնութիւնը, որով կրնանք մեր ազգային ներքին դործերը մինչև սահմանեալ կէտ մը՝ մենք ինքնիրեն հոգալ, առանց օտարի միջամտութեան:

Քաղաքական մասնաւոր պաշտօն մը չունինք, զինուորութիւն ընելու ստիպուած չենք, մեր երկրին սահմանադրութիւնները պաշտպանելու պէտք չունինք, ասեղնաւոր հրացան և շերտաւոր թնթանօթ ձեռք ձգելու հոգի չունինք: Այս այսպէս ըլլալով՝ հետեաբար մեր Ժամանակէն տէրն ենք, և եթէ այս ժամանակին յարգ չենքը ճանչնար, և դոնէ մեր բարոյական, մտաւորական և նիւթական վիճակը բարւոքելու համար նոյնը չենք դործածեր, անտարակոյս ամեն պարսաւանաց արժանի ենք:

Այո՛, թշնամի չունինք, որուն դէմ զինուորական պատրաստութիւններ տեսնենք, սակայն ունինք ահաբեղի թշնամի տգիտութիւնը, որ դարերէ՛ ի վեր զմեզ դերի ըրած է. անոր դէմ մարտնչելու պատրաստութիւնք, ընտիր զինուորներու տեղ ընտիր քաղաքացիներ պատրաստենք, քաղաքակիրթ ազգ մը հանդիսանանք:

Ո՛վ Հայեր, անտարբերութիւնը մէկդի ընենք, զգանք մեր մարդկութեան արժանաւորութիւնը, յիշենք որ մենք ալ Եւրոպացւոց պէս բանականութիւն ունինք, անոնց պէս աչք ունինք տեսնելու, ու միտք՝ խորհելու համար, յիշենք որ մենք ալ վաղեմի երևելի ազգի մը զաւակներ ենք, յիշենք որ ազդերու պատմութեան մէջ մենք ալ փառաւոր տեղ մը ունինք: Յիշենք որ մի միայն ուտելու, խմելու, քնանալու համար ստեղծուած չենք. մեր կեանքը աւելի բարձր և աւելի վսեմ նպատակ մի ունի, և գաղղիացի երևելի մատենագրի մը ըսածին համեմատ, « Մեզմէ աւելի մեր ընտանիքին, և մեր ընտանիքէն աւելի մեր հայրենեաց օգտին համար աշխատելու պարտաւորութիւն ունինք »:

Մէկգի ընենք այն զգուելի և ազգակործան բնութիւնն որ կարծես թէ մեր ազգին միայն յատկացած է . այսինքն այն աշխարհին դործին՝ որուն մասնակից չենք , այն ընկերութեան՝ որուն անգամ չենք , անոնց ծուռ աչքով կը նայինք , և փոխանակ ձեռնաուռութեան , արդեւք լինելու կ'աշխատինք : Ասոր հակառակ քաջալերենք ամեն ազգօղուա ընկերութիւնները , յարգենք և մեծարենք այն ազգակիցները , որոնք անշահախնդիր ողւով անձնուէր ազգային յառաջագիմութեան համար կ'աշխատին , ուրախանանք և փառաւորենք որ մեր ազգայնոց մէջ տաղանդաւոր և կենցաղազէտ անձինք ունինք , և ինչ որ մենք անկարող ենք ընելու , ունինք անհնկ ազգակիցներ որք կարող են նոյնը ընելու , սլասուենք , մեծարենք , յարգենք , սիրենք դանսնք , և աջակից ըլլանք անոնց :

Արդի դարուս մէջ ազգայնութեան ողին կը տիրէ , ամեն ազգ նախանձախնդիր է իւր ազգային յառաջագիմութեան : Ամերիկացին Եանքի եմ կըսէ կը պարծի , Գաղղիացին՝ գաղղիացի եմ կըսէ , Անգղիացին՝ Անգղիացի , իսկ Հայն ալ Հայ եմ թող ըսէ , ու պարծի . . . : Եթէ պարծենալու տեղի չունի , յանցանքն իրն է և ոչ ուրիշին . . . :

Ա՛հ , մեր հայրենիքը , մեր ազգը կենաց և արեան զոհօրութիւն չպահանջեր մեզմէ . հայրենեաց ազատութեան , և անկախութեան համար մեռնելու կանչուած չենք , հապա իր պահանջածը փանաքի է , որ չենք գիտեր , ինչ անուան պիտի արժանանք եթէ անոր ձայնին չպատասխանենք :

Ամեն հայ , ինչ կրօնի որ կը վերաբերի , կը պարտաւորի իբր Հայ ազգային յառաջագիմութեան նպաստելու : Ար յուսանք որ ժամանակը հասաւ արդէն որ իմանանք կրօնքի և ազգութեան տարբերութիւնը :

Ար ցաւինք որ մեր մէջը կը դտնուին տակաւին անանկ նախապաշարեալ անձինք , որոնք մեզմէ կրօնքով անջատեալ պապական և բողոքական ազգակիցները իբրև Հայ չեն համարիր , « Հայ չէ , պապական կամ բողոքական է » կ'ըսեն :

Այս կէտին վրայ հարկ իսկ չենք համարիր երկարօրէն դը-

րելու, բայց մեր խօսքը նոյն տեսակ նախաստաշարեալ
անձանց ուղղելով, կը յաւելունք որ Գաղղիոյ, Անգղիոյ
և ուրիշ լուսաւորեալ տէրութեանց մէջ ամեն կրօնէ բաղկա-
ցեալ ժողովուրդ կը գտնուի:

Օրինակի աղագաւ. Գաղղիոյ կառավարութեան կրօնքը սրա-
պակհանութիւն է, բայց բողոքական և բուն իսկ իսրայէլացի,
և Գաղղիացիներ ալ. բայց միթէ պապական Գաղղիացի-
ները միայն Գաղղիացի են, բողոքականն և իսրայէլացին Գաղ-
ղիացի չեն: Ամեն Գաղղիացի ազատ է իւր ընտրած կրօնին
հետեւելու, և այս մասին իրարմէ կը տարբերին, բայց ազ-
գութեամբ ամենքն ալ մի և նոյն մօր Գաղղիոյ զաւակներ են:

Այս նկատմամբ թէ լուսաւորչական Հայ, թէ պապական
և թէ բողոքական, ամենքս ալ Հայ ենք և մէկ մօր զաւակ-
ներ, եթէ կրօնքով կը տարբերինք, մէկը այս միւսը այն
եկեղեցին կը յաճախէ, բայց ազգութեամբ մէկ ենք և չենք
կրնար զանազանիլ:

Ակամայ կը պարտաւորինք հոս յիշել որ մեր կաթուղի
ազգայնոց, տղէա մասին մէջ անշուշտ, աւելի հակում
մը կը նշմարուի դէպ 'ի Ֆրէնկա-իւն: Ասոնցմէ մէկ մասը
օրէ օր իրենց նախնի հայկական սովորութիւնները մէկտե-
րներով՝ դէպ 'ի Եւրոպականութեան հակիլ կը ձեացնեն,
իրենց հայերէն անունները կը Ֆրանկացնեն, պարզ Յով
հաննէսի տեղ Թան կը կանչեն, Պօղոս Պետրոսի տեղ,
Բիէք կ'ըսեն:

Ասոնք անշուշտ մեծ կարևորութիւն մը չունին, բայց ի-
րօք նշանակութեան արժանի կէտը այն է որ իրենց մայրենի
լեզուն չին խօսիր, սովորաբար տաճկերէն կը խօսին, Գաղ-
ղիարէն բառերու խառնուրդով մէկտեղ, օտարազգաց առ-
ջև իրենց հայութիւնը ծածկելով Եւրոպացի կը ձեանան,
և ինչ ազգութեան վերաբերելնին իրենք անգամ չեն գի-
տեր: Մենք իբրև հայ կը ցաւինք ասանկ Հայերու վրայ,
ըստ որում անոնք ուր որ երթան և ուր որ գտնուին Հայ
են: Եւրոպա զկաթուղի Հայերը Հայ կը ճանաչէ, բուն իսկ
պապական կառավարութիւնը զանոնք նոյն ազգութեամբ կը
ճանաչէ, Աննետիկը և Աիեննայի Միսիթարեան արժանա-

պատիւ Հարք իբրև Հայ Ճանչցուած են Աւրուպայի մէջ և իբրենք զիբենք երբէք ուրիշ ազդ անուանած չեն: Աւրեմն մեր կաթոլիկ ազգայնոց ոմանց իբենց հայութիւնը ուրանալը ինչքանի կրնանք յատկացնել, եթէ անոնք Հայ չեն, հասկանալի չեն, եթէ Հայ են, ուրեմն Հայ են, բայց կե՞ Հայ չենք ընդունիր:


Սակայն մենք կատարելապէս համոզուած ենք որ մեր կաթոլիկ ազգակիցներուն լուսաւորեալ և կրթեալ մասը բոլորովին ուրիշ կերպով կը խորհի. ասոր յայտնի ասպայոյցն է, վերջին օրերս Գեր. Հասունեանի պատրիարքութեան առթիւ մեր կաթոլիկ ազգակցաց մէջ տեսակ մը յեղափոխութիւն տեղի ունենալը, անոնց բողոքելը, և, որով յայտնի ըրին կ'ըսէ Մասիւ, որ իբենց երակներուն մէջ Հայկական արիւն կը վազէ:

Մենք կը հաւատանք որ մեզի հասակակից երիտասարդ կաթոլիկ ազգայնոց սիրտերը մեզի պէս ազգային սիրով կը բարախեն: Մենք եթէ զանոնք ճանչնալու պատիւը ունենայինք, եղբայրական սիրոյ ձեռք պիտի կարկառէինք անոնց և պիտի ըսէինք:

«Քանի որ ամենքս ալ մի և նոյն զգացմունքը կը կրենք, և մի և նոյն կերպով կը խորհինք ազգային իրերու վրայ քանի որ ազգային սէրը, ազգային պատիւը ամեն բանէ վեր և բարձր կը դասենք, քանի որ ամենքս ալ ազգային յառաջադիմութիւնը կը փափաքինք, ուրեմն միանանք, և ՚ի միասին աշխատինք ազգային շինութեան և յառաջադիմութեան: Մէկդի ընենք կրօնական յուզմունքները և նախապաշարմունքները, սրոնք ներկայ դարուս ողոյն չեն համաձայնիր. յարգենք իրարու կրօնքը, դուք ձեր եկեղեցին յաճախեցէք, մենք մեր եկեղեցին կը յաճախենք. դուք ձեր եկեղեցւոյն հաւատարիմ մնացէք, ինչպէս որ մենք մեր եկեղեցւոյն հաւատարիմ կ'ուզենք մնալ. բայց ազգութեամբ միանանք, զիրար զրկենք, զիրար սիրենք, և ազգային յառաջադիմութեան միատեղ աշխատինք. . . . :

Մեր ազգային լրացիրներուն կը պատկանի (Մեծնաւ ալ մէկտեղ կ'իմանանք) հոգ տանիլ երկու ազգակից եղբարց

մէջ օրէ օր սիրոյ յարարեցութիւն հաստատելու : Ազգային լրացիւններուն կը վերաբերի՝ փոխանակ կրօնական խնդիրներ յուղելով իրարու մէջ հակառակութիւն յարուցանելու , մըտադիր ըլլալ զանոնք իրարու մօտեցնելու և վաղեմի ատելու թեան ոգին փարատելու :



Ասկէ առաջ ըսինք որ մեր դպրատուններուն մէջ մանկավարժութեան նախնի ծուռ դրութիւնը կը տիրէ տակաւին , անանկ որ աշակերտ մը 8-10 տարուան մէջ հաղիւ հաղ կը սորվի ինչ որ քանի մը տարուան մէջ կրնար դիւրութեամբ սորվիլ եթէ օրինաւոր հետեւի իրեն դաս տրուէր :

Աստի մեր ազգային դպրատուններուն մէջ դասատուութեան կերպը Եւրոպական դրութեան համեմատ հաստատելու համար հարկ է դնել սասնի շտի երիտասարդ Եւրոպայի ուսուցչական դպրոցները զրկել զերմանական ուսուցչութեան կամ մանկավարժութեան նոր դրութիւնը սորվելու համար :

Եւրոպայի մէջ մանկավարժութիւնը կամ վարժապետութիւնը արհեստ մի է , և բաւական դժուար արհեստ , ըստ որում զանազան ուսմանց դասերու համեմատութեամբ կը պարտաւորին աշակերտք կատարեալ չորս տարի ուսուցչական դպրոցը կրթուիլ իրենց վարժապետութեան վկայագիրը ընդունելու համար :

Իսկ մեր մէջը բաւական է որ մէկը կարդալ դրել դիտնայ և քիչ շատ քերականութեան տեղեակ ըլլայ , առանց դժուարութեան վարժապետ կը կարդուի տոանց ամենեւին իրեն խընամոցը յանձնուած աշակերտները կրթելու մասին մասնաւոր մէթօտ մը կամ կանոն մը ունենալու :

Ընդհանրապէս ճանչցուած է որ դաստիարակութեան և դըրսորոցներու օրինաւորութեան և յառաջադիմութեան մասին Ամերիկայի միացեալ Նահանգք առաջին հանգիսացած են :

Ամերիկայէն ետքը կու գան հիւսիսային Գերմանիա և Զուիցերիա , իսկ Գաղղիա և Անգղիա Ամերիկայի հետ բաղդատելով շատ ետ մնացած են :

Մեր ազգայինք ստիպեալ չեն մինչև նոր աշխարհք երթալ մանկավարժութեան նոր դրութիւն մը սորվելու համար :

Չուիցերիայի դեղնցիկ լճի մը ամանց վրայ սիրուն գիթն
 քով գիւղ մը կայ Քիւսնախթ անունով. նոյն գիւղին մէջ
 մեծ և հոյակապ շէնք մը պիտի տեսնես. նոյն շէնքէն ներս
 մտիք, բնգարձակ օրահներ պիտի ներկայանան ատջիւղ. անոնց
 մէջ հարիւրաւոր երիտասարդներ պիտի տեսնես, որ
 վարժապետութեան համար կը պատրաստուին: Հոն պիտի
 գտնես զանազան ազգերէ և զանազան երկիրներէ եկած ե-
 րիտասարդներ, սիրտդ կարելի է ցաւի եթէ հոն քեզի ազ-
 ցակից Հայ մը չգտնես. դնա՛ առաջ և աղէկ մը քննէ, հիւ-
 սիսային և արեւմտեան խարտեաշ դէմքերու մէջ արեւելեան
 դէմք մ'ալ պիտի տեսնես, թուի՛ մազերով սև աչքերով,
 կարեկից դէմքով. խօսէ անոր հետ, և պիտի տեսնես որ ան-
 նիկա քեզի ազգակից է, անիկա Հայ է:

Պարոն Սարգիս Բէյ Նազարեանց ատջին Հայ երիտասարդն
 է, որ Քիւսնախթի հոյակաւոր ուսուցչական դպրոցին մէջ
 կը կրթուի: Անիկա հոս ուղարկուած է Մեծապատիւ Սանա-
 սարեանց և Եզեանց ազգասէր անձանց կողմանէ որ 'ի Բեթ-
 րսպուրկ, և անոնց ստատարութեամբ և ձեռնառուութեամբ դեր-
 մանական մանկավարժութեան դրութիւնը սորվելու կը պա-
 րապի, այն նպատակաւ որ նոյնը կատարելագործելէն ետքը
 Ռուսաստանի հայաբնակ քաղաքներու դպրատուններու մէջ
 նոյնը պիտի ներածէ:

Արչափ ուրախութիւն է մեզի տեսնել, որ իրապէս մեր ազ-
 ցը սիրող և լոկելայն անոր օգուտը և յառաջադիմութիւնը
 խորհող ազգակիցներ ունինք. Պարոնայք Եզեանց և Սանա-
 սարեանց ամեն գովութեան արժանի են արդարև ազգայնոց
 կողմանէ, և կրնան Աստուանդնուպօլսոյ և մանաւանդ Տփլիսի
 մեր ազգայնոց շատերուն նախանձաւորութեան օրինակ ըլ-
 լալ . . . : Պատիւ անոնց ուրեմն:



Մեր ազգին համար մեծ դժբաղդութիւն մի է որ մեր
 Հայերը զանազան հեռաւոր երկիրներու մէջ սփռուած տա-
 րածուած են, և այս պատճառաւ ոչ միայն անոնց հետ ուղ-
 ղակի յարաբերութիւն չունինք, հասլա նաև շատ քիչ տե-

դեկտեմբերն ունինք անոնց վրայ : Օրինակի համար Հնդկաստանի, Չինաստանի և արևելեան ծովերու Հոլանտայի կղզիներու մէջ բնակող մեր ազգակիցներուն վրայ շատ քիչ տեղեկութիւն ունինք : Մինչև անգամ Աուստաստանի և Պարսկաստանի մէջ գտնուած մեր ազգակիցներուն վրայ ունեցած տեղեկութիւննիս շատ թերի է : Բոլանիայի (Ահհաստան) մէջ նաև մենք շատ ազգակիցներ ունինք . բայց երբէք մեր ազգային լրագիրները անոնց վրայ լուր մը չեն հաղորդեր մեզի, ինչպէս նաև վերոյիշեալ երկիրներու հայերու վրայ : Հաղիւ հազ երբեմն երբեմն Հնդկաստանէն ուղղուած ազգասէր նամակներ կը հրատարակուին Արշալուսոյ մէջ . զանոնք մենք սիրով կը կարդանք ըստ որում քողցր է մեզի այնչափ հեռուէն հայու ձայն լսել . . . :

Բայց մենք փոխանակ այսչափ հեռուն երթալու փոխանակ Հնդկաստանի և Չինաստանի ծովերու վրայ կեդերելու մեր բոլորաթիքը նայինք, ու պիտի տեսնենք որ մեզի մօտ, մեր երկրին մէջ բնակող հայերուն վրայ անգամ բնաւ կամ շատ քիչ տեղեկութիւն ունինք : Օրինակի աղաղաւ, փոքր Ասիոյ և Եւրոպիոյ Տաճկաստանի մէջ անանկ քաղաքներ կան, որոնց մէջ Հայ կը գտնուէին թէ ոչ չէինք դիտեր :


Ազգային Սահմանադրութեան փոքր տետրին վերջին երեսը յիսուն Առաջնորդական քաղաքներու անուններ կը կարդանք, և կը խոստովանինք ամօթով որ այս քաղաքներուն մէջ կան անանկներ, որոնք առաջին անգամ մեր տկանջին կը զարնեն և ոչ թէ միայն աս քաղաքներու ազգակիցներու վրայ տեղեկութիւն չունինք, հապա նաև անոնց մէջ հայ ըլլալնին չէինք դիտեր : Գիտե՛լու է որ այս քաղաքները առաջնորդական քաղաքներ են հետեւարար բաւական ընդարձակ, հապա ուրիշ որչափ և որչափ քաղաքներ դիւղաքաղաքներ ունինք Ասիայի ներսի կողմերը աննշան և ամայի տեղուանք, որոնց վրայ ամենեին տեղեկութիւն չունինք, և որոնց անունները երբէք ազգային լրագրաց մէջ չեն յիշուիր . . . :

Արսեն ու կը հաստատեն միշտ առանց ստոյգ տեղեկութիւն ունենալու թէ և կամ Ծ միլիօն Հայ ենք բոլոր տիեզերքիս մէջ : Այս թիւը մեզի անհաւատալի կ'երևայ : Անտարակոյս աւելի կարևորութիւն մը տալու, և օտարաց համակրութիւնք

և ուշագրութիւնը դրան չու համար այս թիւը առաջ կը մղենք միշտ. սակայն կարելի չէ՞ արդեօք աշխարհագիրը ընել ամեն հայաբնակ երկիրներէ օրինաւոր տեղեկութիւն ստանալով, որպէս զի դիտանք որչափ եղբայրներ և ազգակիցներ ունինք բոլոր հողազնտիս վրայ: Եւրոպացիք, կըսէ պարբերական թերթ մը, իրենց երկրի մինչև անգամ զանազան տեսակ կենդանիներու թիւը դիտեն, քանի որ մենք մեր ազգին քանի հողիէ բաղկանալը անգամ չենք գիտեր. . . . :

Հոս կը դադրեցնենք մեր խօսքը, մեզի առաջագրելով ուրիշ առթիւ կրկին մեր խորհրդածութիւնները ընել ազգային իրերու վրայ: Գիտենք և համազուած ենք որ մեր խօսքերը նաև հովի պէս պիտի անցնին երթան առանց հետք մը ձգելու, ասիկա զմեզ չվհատեցներ երբէք, մենք դէպ 'ի մեր նպատակը առաջ պիտի քալենք: Մենք լսած ենք շատ անգամ որ մեր ազգայինք կըսեն, « Պարտալ բաներ են արոնք » « Ժամանակի կարօտ է. » « Ժամանակին լող պալտ է. » « Մեր ազգին համար չէ », և. և. : Այո՛, ամեն բան ժամանակի կարօտ է, սակայն ըսկիղք մը ընելու և աշխատելու է, որ Ժամանակին մեր նպատակին հասնինք: Մեր հայերոսն համար չէ: Ինչո՞ւ համար արդեօք, միթէ՞ Նախախնամութիւնը մեր Հայերը միւս ազգերէն ասարթեր ստեղծած է, միթէ՞ բանականութեան բաժնուելու ատեն՝ մեզի պակաս բաժին ինկած է: Ա՛չ, ո՛չ, ո՛չ, պարզապէս խոստովանինք որ մենք ծոյլ, թոյլ, անհող և անտարբեր ազգ մի ենք:

Աը կրկնենք հոս դարձեալ, թէ ինչպէս կաթը նորածին մանկան և անձրևը արևակէզ երկրի հարկաւոր է, այսպէս ալ մեր ազգին ներկայ վիճակին անհրաժեշտ պէտք եղածն ՌԻՍՈՒՄՆ և ԿՐԹՈՒԹԻՒՆՆ է, ըստ որում առանց ասոր անհնարին է մեզի որ և իցէ բարոյական և նիւթական յառաջագրութիւն ընել:



ՀՀ Ազգային գրադարան



NL0115033

